

րազայից փոխուելով՝ հարկ եղաւ բանակաթեմերու դրութեան, ստեղծուեցաւ հակայածաւալ՝ «Հայկական Բանակաթեմ», որ Բիւզանդեան Պատմութեան մէջ յաճախ վճռիչ դեր կը խաղայ (Θέμα των Ἀρμενιάκων, կամ պարզ Ἀρμενιάκον), որուն կը վերաբերէր՝ ի միջի այլոց՝ ամբողջ ծովազերքը Սինոպի մօտերէն մինչեւ Բաթումի մօտերը: Բայց երբ ասի բաժնուեցաւ այլեւայլ մասանց, «Հայկական»-ին մնաց արեւմտեան բաժինը, (— Թ. դարու վերջերը՝ ուրոյն բանակաթեմ եղան նաեւ «Կողոնիա»՝ արդի Շապին-Գարահիսար եւ Սերաստիա. —) արեւելեան ծովափունք կազմեցին ուրոյն թեմ՝ մը՝ կենդրոն ունենալով Տրապիզոն, եւ կոչուեցաւ հին անուամբ մը Խաղափ (Χαλδία): Ասի եղած է իբր 837ին¹: Խաղտեաց թեմին կը վերաբերէին, ցորչափ Բիւզանդացւոց ձեռք մնացին, Բաբերդ ու Սպեր, եւ քիչ ժամանակ նաեւ Եկեղեաց²:

¹ Հմմտ. J. B. Bury, A history of the Eastern Roman Empire (A.-D. 802—867), London 1912, p. 223, 261

² Բանակաթեմերու մասին՝ Հմմտ. H. Gelzer Die Genesis der byzantinischen Themenverfassung, Leipzig 1899, հայ թարգմ. Հ. Գրիգորեան Վկրանաւորութիւնք Բանակաթեմերու դրութեան, Վիեննա 1903. «Ազգ. Մատ.» ԽԳ: